

ՀԱՅԵՐԸ ԴՐՍՈՒՄ

# ԱՂՈՐՔ ԴԱՐՁԱԾ ԵՐԳ



Աննա Բեգլարյանը և Սոնա Կարապետյանը

Դա տասնույթ տարի առաջ էր: Ռուստովի հայ համայնքի նախկին շենքում գրքի շնորհանդես էր, գրական-երաժշտական երեկո: Հանկարծ սեղանակիցներից մեկը գեղեցկատես մի տիկին վեր կացավ, անուշ ժպտաց բոլորին, թեթևակի գլուխ տվեց և սկսեց իր կարոտի երգով թևածել դահլիճում նստածների հոգիներում: Ճիշտն ասած, ես առաջին անգամ էի լսում այդ հոգեցունց մեղեդին «Լարաբադի հորովել»:



Որդու՝ Կարենի հետ

*Բրիքնակը տուսա եկալ,  
Տանս յերա լուսա եկալ,  
Սոր մին կորե, վեր վար անիմ,  
Գիդա սրտես լուսա եկալ:*

*Հո արա, հո,  
Ապան մատաղ,  
Ապուն դայուն կուճիր հոտաղ,  
Հո արա, հո, հո, հո, հո, հո:*

Հավարվածները՝ տարագիր դարձած ուսուցիչներ, լրագրողներ, բժիշկներ, նկարիչներ... մեկ անգամ էլ վերապրեցին հայրենիքի կանչն ու կարոտը: Օտրում էր հորովելը՝ հայ գեղջուկի խնորանք-դիմումը իր հինգ «խոխեքից» մեծին:

*Հոնե ապան մինակա իլալ,  
Դարդը սրտես տեսակա իլալ:  
Էտ հիբ բուրդան բոյ բշեցեր,  
Դարդը սրտան տես բշեցեր:*

*Հո արա, հո,  
Ապան մատաղ,  
Ապուն դայուն կուճիր հոտաղ,  
Հո արա, հո, հո, հո, հո, հո:*

Ինչ զգաց ներկաներից յուրաքանչյուրը, չգիտեմ, բայց, չգուցարով արցունքներս, ես ընդառաջ գնացի ինձ անձանոթ երգչուհուն: Մենք գրկախառնվեցինք հարյուր տարվա ծանոթների պես:

Այդ օրը տուն եկա մեծ հարստություն գտած: Հանդիպել էի ոչ միայն լավ մարդու, այլև երգը հոգում պահ տված մեկին, ում կյանքի դաժանությունները ավելի բարի էին դարձրել, քնքուշ ու կանացի:

Այսպես տեսա նրան առաջին անգամ՝  
**ԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ:**

— Երբևի՜ց էք երգում, սիրելի՛ Աննա:

— Ինչքան ինձ հիշում եմ, երգում եմ, երգն իմ ամենասրտակից բնկերն ու բարեկամն է, քանզի երգն ինձ հետ է թե ուրախ, թե տխուր պահերիս: Ես հիշում եմ ինձ փոքրիկ դեռահաս մի աղջնակի, դպրոցական բեմում կանգնած երգում էի շատ ոգևորված ու հուզված... Ես երգում էի աղբյուրներին: Շատերը դահլիճում հուզվեցին. ես հետո հասկացա, որ Արցախ մեր երկրում օտարի խոսքն ու երգն էր իշխում, և որ ինչպես մենք, այնպես էլ մեր Արցախ աշխարհը գերի է ընկած օտարի ձեռքը... Այո, այս ամենը հասկացա շատ տարիներ հետո...

— **Օննդավայրը՝ որպես լինելիության սկիզբ:**

— Արցախ, Հայրուքի շրջան, գյուղ Խծաբերդ: Մեծ պապերս եկել են Հարար գյուղից: Ասում են Մամսոն պապս էր շատ



Աննա Բեգլարյանը սիրելի թոռնիկի՝ Ռոբերտի հետ



Երեխաների և թոռնիկների հետ

լավ երգում, որին ես չեմ տեսել, զոհվել է Հայրենական պատերազմում, Ռուստովի համար մղված մարտերում: Ինչ իմանար, որ թոռնուհին տարիներ հետո որպես Բաքվի փախստական, հանգրվան է գտնելու հենց այն քաղաքում, որի համար ինքն է զոհվել: Հա յի բախտ... — ծիծաղում է ու շարունակում, — ճակատագիրն ինձ հասցրել է այստեղ, որ պապիս գերեզմանին հորովել երգեմ:


Օննդներս՝ Ռաֆիկ և Նորա Բեգլարյանները արցախցի ավանդապաշտ մարդիկ էին՝ իրենց աղ ու հացով, երգ ու պարով, հող ու ջրով, հպարտ չորս ուսումնասեր զավակներով:

Օտների կատարներին, գետի ջրերում, ձիու թամբին, սարերում ու ձորերում իմ երգն ու խենթ մանկությունն ու պատանեկությունը չավարտած գնացի ուսանելու Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժնում, որից հետո սկսեցի դասավանդել իմ Խծաբերդում և հարևան գյուղերում: Դրանք իմ կյանքի լավագույն տարիներն էին, կայացման առաջին քայլերը, առաջին սիրո աննկարագրելի բերկրասքրը:

Այնուհետև շատ բան փոխվեց, երբ ամուսնացա և տեղափոխվեցի Բաքու: Մա մի միջավայր էր, որը ոչ մի կապ չուներ իմ



Մահունասարը



Խծաբերդի տներն են՝ շաք-շաք փոված Միջնակ սարի դոշին, որն էլ իր հերթին շրջապատված է իրենից բարձր սարերով, աջնից Սուրբ սարն է, ետևից Երկար մատը, ձախից Մեծ սարն ու Ուխտաքարը, աջից Մահունասարը: Արտաշես Պողոսյան «Հրաժեշտ անցյալին» գրքից

էության, իմ բանաստեղծական ու խենթ ներաշխարհի հետ: Թոչուրը վանդակում, ինչպես ասում են:

Օննդներս զավակներս՝ Լարինես ու Կարենս: Կյանքի մամլիչի տակ օրորոցայիններս դարձան ողբ ու աղոթք, հատկապես միտում էր բանակում զոհված միևնույն տղերս կորուստը...

— **Ինչպե՞ս եկավ 1988-ը ձեր կյանք:**

— 1988-ը փոխեց, խեղեց շատ — շատերի ճակատագրերը, հատկապես Մում-գայիթում, Բաքվում ապրող հայերի: Մկսվեց սպանող ու ցեղասպանություն: Երեխաներիս հետ փախա գյուղ Խծաբերդ, իսկ ամուսինս գնաց Ռուսաստան:

Գյուղում նորից սկսեցի դասավանդել և քույրերիս հետ ակտիվ մասնակցել ազգային-ազատագրական շարժմանը: Դրան հաջորդեց պատերազմի դաժան տարիները: 1994-ին տեղափոխվեցի Ռուստով՝ ամուսնուս մոտ: Մկսվեց բոլորովին մի ուրիշ կյանք՝ մեկ ուրիշ օտար երկրում:

— **Ինչպե՞ս ընդունեց ձեզ հայ համայնքը Ռուստովում:**

— Առաջինը հանդիպեցի Շողիկ Միմվոնյանին: Երա օգնությամբ էլ աշխատանքի անցա քաղաքի թիվ 15 դպրոցում՝ որպես հայոց լեզվի ուսուցիչ: Իհարկե, երգս ինձ հետ էր որպես ամենահավատարիմ բարեկամ: Շարունակում էի այն ուսուցանել հայ մանուկներին, մասնակցել մրցույթների ու փառատոնների:

Այսպես անցան տարիներ... Շատերը եկան ու գնացին, միայն ես ու երգս հավատարիմ մնացինք իրար: Հիմա երգում եմ թոռնիկներս համար: Ամեն օր պատրաստվում եմ, որ մի գեղեցիկ օր պիտի երգեմ որդուս Կարենիս հարսանիքին:

— **Միտելի՛ Աննա, եթե ետ նայե՞ք, ի՞նչ սխալ չէիք կրել:**

— Առաջինը չէի լքի հայրենիքս, որքան էլ դժվար լիներ... հետևաբար երեխաներիս չէի կորի հայրենի հողից: Երկրորդը՝ չէի ամուսնանա մի քաղաքում, որի անունը Բաքու է:

— **Ո՞րն է տանջող ցավը...**

— Հայրենիքիս ցավն իմ ցավն է, չի ամրժվում...

— **Ափսոսանք...**

— Կորցրած ժամանակը և կորցրած հնարավորությունները:

— **Ի՞նչ ես երագում...**

— Չեմ երագում... Պատրաստվում եմ մի օր անցնել Կարոտի բոլոր կամուրջները և իմ խենթ նույնզով թոչելի դեպի էն լեռները, ուր հայրս սպասում է ինձ մաճր բռնած, դեպ էն լեռներում կորած իմ փոքրիկ գյուղը, որն այսքան տարի ինձ բացակա չի դրել և սրտի թրթիռով պահում է իմ վերադարձի հասցեն:

... Ուզում եմ նաև ճշտել, թե այս ի՞նչ կանչ է, որն այսքան ժամանակ ինձ հանգիստ չի տալիս... ինչ է անքունը... Հորովել է, Սեբ, Կարոտ, Հայրենի տուն... Զգիտեմ... լուրմ է Աննան, լճացած աչքերում աղամանուկներ են շողում...

Իսկ ես, սիրելի Աննա, գիտեմ, որ աշխարհի մեծ բեմերից հաստատ պակասել է քո քնքուշ մեղեդային երգը, քո ալպիական մանուշակի գույնը, արվեստի ամսագրերի շապիկներից պակասել է մի լեռնից, սակայն շատ քնքուշ հայուհու յուսանկար մշտաժպիտ հայացքով ու լայնեզր գլխարկով... մի հայուհու, ում երգն իր ամենօրյա աղոթքն է առ Աստված:

Սոնա ԿՄԱՐՍՅԱՆ,  
լրագրող